

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅՀ-ՌՅՀԱ

ՀԱՏՈՐ

ԼԹ

1921

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 10

Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻԻԹԱՐ ԻՄԱՍՏՈՒՆ ԲԺՇԿԱՊԵՏԻ

ՎԱՍՆ ՔԱՐԱՆՑ ԵՒ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ ՆՈՅՍ
ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆՑ ԱԿԱՆՑ

Մայրավանքիս Զեռագրատան Ոսկեփորիկին, բէն մին կը պարունակէ յիշեալ վերնագրով կա-
րէոր գրութիւն մը, ընծայուած՝ Մխիթար
Հերացւոյ, Հատուածս առանձին Յիշատակարան
մը չունի. սակայն Գրչագրին սկիզբը նշանա-
կուած է՝ մէջի Յիշատակարաններէն հանելով՝
«Գրիչ մատենիս Բուրիանց Տէր Թումայ. քուա-
կան ՌձԻԵ (= 1696): Յարգ Հերացւոյ այսպիսի
գրութեան մը գոյութեան ոչ մէկ յիշատակու-
թեան չէինք հանդիպած: Նոյնը պիտի կուտայ
Հ. Բ. Սարգիսեան իր «Մայր Յուշակ Հայ
Զեռագրաց» ի մէջ (Ոսկեփորիկ Թ. 17 էջ
824) հետեւեալ խօսքերով: Միևիկար Հերաց-
ւոյ այս գրութեան աշուր յիշատակուած չէ:
Շատ աւելի հետաքրքրական է, ոչ միայն ակ-
նադիտական և քննադատական, ևն, տեսակետով,
այլ և աշխարհագրական և ազգագրական քաղ-

մապիսի տեղեկութիւններով, քան Եպիփան
Կիպրացւոյ նոյնանիւր գրութիւնը:
Նկատի ունենալով շահեկանութիւնը՝ նոյնու-
թեամբ կը հրատարակենք:

«Յիշենք զպատրաճն և (զ)գմբուխան, որ
են ազգ մի. և որոշած՝ երկու. տաք և չոր.
և իրենքս պակաս գործեն քան զտուռնն
յոսկոյն բնութիւն, և զտանի սա ի Մղրպը-
կաց աշխարհն. և իւր խափաթն՝ է՝ որ
օձահարի օգտէ և զազանաց կատաղածի:
«Յակունդն երեք ազգ են, բնութեամբ
քար են. մինն կարմիր, մինն դեղին, մինն

1. Օրհուտ.

լուրջ. կա(յ) և ի սոցա ալլաքարեր և ոչ ծանր. բայց կարմիրն պատուական է քան զայլն. բնութիւն՝ չոր, մօտեւոր յոսկոյն բնութիւն. և յերբ դնեն ի կրակն և փչեն ի վերայ՝ առաւել աղուորնա(յ). չգործի յինքն ֆնաս. ոչ երկաթ է ոչ կրակ. և է աննման (յ) ամենայն քարերն: Եւ զեղին յակունդն ի կրակն քանի շատ յամէ՝ առաւել աղէկնա(յ): Եւ զկարմիրն աւելի չպիտի թողուլ. երբ ճերմկէ՝ հանել պիտի. իր խասիաթն այն է, որ ով որ ունենա(յ) առ ինքն կամ ի մատանի, կամ յինչ և լինի, տապաս չելանէ յինքն. և ի սիրտն ուրախ կենա(յ) հետ ամենայն մարդոյ, և տրտմութիւն չդիպի յինքն. և են տաք և չոր:

«Յակիկն շատ ազգեր են. ի շատ տեղիք գտանի. են որ պակաս են իր աղվորութիւն, որպէս ազած մսի շուր. իր խասիաթն այն է. ով որ ունենա(յ)՝ յիրմենցն է խաղաղարար և անկոխ լինի. և մէկ այլ խասիաթն այն է, որ թէ այլ և կին առնեբեր լինին՝ օգտէ. և մէկ այլ որ ատամն որ շարժի և ժանգոտի՝ սրբա իրովն՝ նա լաւանա(յ):

«Տաճնաճն կանաչ քար է. նման է ի զմրութան, և գոյներն շատ լինի. և այլ քարեր կան ի սա նման. բայց գտանի սա ի պղնձահանքն և զմրութան յոսկոյն Մաղարայն: Եւ է տահնաճն կակուղ, երբ քերես՝ քերվի. և զքերուքն թէ ի յաչքդ դնես՝ սրբէ զսպիտակն. և ընդ խայթածն շփես՝ օգտէ. և թէ լեսեն և խառնեն ընդ քացախ, և ի վերայ երցունի ածես՝ օգտէ. և հետ երկուցն յիստկի. և պղտորի նոյն. պէս և վաղն, և ընդ երեկն սրբի:

«Պատմախն. հնդկացիքն կոչեն նմա «պպի մոլաքառ», որ թարգմանի քար թիւնաւորաց. է բնութիւն կակուղ և տաք. և իրենս գոյներն շատ է. զեղին, լրջագոյն, կարմիր(ր), կանաչ և լրջագոյն, սպիտակ: Եւ այլ կա(յ) ի սոցա նման, որ և խարին ոմանք ի գնելն, բայց աղէկն յիստակ զեղին է. և այլ ի հետն լուրջն. և իւրեանք ելն է ի Սին քաղաք և ի հնդկիք և յարեւելք և աղէկն գա(յ) ի խորասանա(յ). Եւ որպէս

է իւր անունն քար թիւնաւորաց, նոյնպէս և խասիաթն է և զեղ մահացու զեղածի. և այլ անուն ասեն դմա խոնդոս. և է խասիաթ, որպէս անսուտ փորձ ածէ. բայց զեղինն է զեղեցիկ:

«Մասն որ է ալմասն, բնութիւն խիստ հով է. քսան և չորս մասն է, որ(պէս) է տարածայն ի հովութեան և ի չորութեան, և պակաս գտանի ի ստեղծութեան. որ այս երկու բնութիւնս ի մէկ տեղ ժողովի՝ ի քար. և է երկու յատկութիւն աննման յայլ իրաց. է կարծր պինտ, որ՝ չկարէ կոտրել զինքն պողվաւ, և ոչ բանի խարստոց: Ապա կամենան շինել ակն. նա արծիճէ կռան շինեն և սալ, և այնիւ կոտրեն որպէս և կամին. նոյնպէս և արծիճէ խարստոց շինեն, և սրեն որպէս և ուզենան. է և ամբառիճ քարն ի նմանէ, իմաստ աչից օգտակար է, որ քոս կենա(յ) որ է պաթրա՝ ողջանա(յ):

«Ֆերոժ քարն կանաչ է լրջագոյն. և են որ զեղեցիկք են տեսակաւ բաժին մի, և ի հետ երկնիցն ժողորին և յիստկին. պայծառ լինի վաղն, և մութն՝ երկկուն: Եւ ամենայն քար որ փոփոխական լինի՝ չէ քար, և ոչ վայելէ թագաւորաց և մեծամեծաց. զի ի բարձրութենէ ի խոնարհութիւն բերէ զուճողն. կա(յ) և սպիտակ մէկ երեսն, որ ասի երկիճ և ոչ գաւ չէ պարտ ունել. ի տրտմութիւն պահէ զուճ նո(ղ)ն, և է կակուղ սակաւ մի, և ոչ շատ:

«Լազվարդ քարն. է բնութիւն հով ու չոր, սակաւ մի թոյլ է. զեղեցիկ գոյն է. երբ ոսկի դնեն՝ ցանկալի է տեսողացն, և ոչ փոփոխի իւր գոյնն, և ոչ առաւելու, և ոչ պակասէ. իւր խասիաթն այն է՝ որ օգուտ է աչաց, երբ ընդ ծառոյր դնեն. և թէ յիւրմէն դնեն ի վերայ կրակին՝ նա ելանէ իւր բոցն շուրջ լեզու լեզու. և այն է իր փորձն ճանաչելոյն, և խասիաթն՝ զուճողն ուրախ պահէ:

«Սն քարն լինի ի խոթա երկիրն. գոյնն խիստ սև, և չկա(յ) յինքն մացառ. է ողորկ և փայլուն. շոյտ կարի. նոյնդ է և տահ(ն?)անն. և երբ լոյսն պակսի մարդոյ ի ծերութենէ, և հայի հանապազ

յինքն՝ ուժովն(յ) լույսն. և հետ ծարրորի յաշան դէն ոք՝ օգտէ. և խստասիրտ մարդոյ, որ զազանաբարոյ լինի և ունենա(յ) ի մատանին՝ խանհդէ խիստ. և է ստոյգ փորձով և զեղեցիկ:

« Գազազն սպիտակ քար է, և քնու թեամբ հով ու չոր. լինի ի Սմբղնդա(յ) երկիրն. և քար մի այլ կա(յ), անունն՝ ալուա. նման է ի զազազս. և այն օգտէ անասնոց աշից, որ սպիտակ լինի՝ ընկել ի ներքս, և ի մաս որ ակն լինի՝ դիպել՝ ի նա կախեն՝ օգտէ. ի տուն և ի դուրս չլար ակին օգտէ. և որ ի մատանին ակն դնէ և հայի՝ աղէկ է. և թէ ի քացախն ձգէ, որ մուխն ելանէ ի քացախէն՝ օգտէ այն քացախն թզրացաւի(?) և թառան չացաւի:

« Մարխաշիան քար է, բազում գունիւր ունի. ոսկէգոյն, պղնձագոյն, արծաթագոյն, երբ խառնեն յինքն քալ(ր)իթ՝ նա ազատի ի յիւրմէն ոսկին. և երբ զերկաթն թաթխեն յիւր քերուէն և այնով մխեն՝ հրահանք ազնիւ և լաւ լինի:

« Պատեհի քարն է տաք ու չոր. գտանի յԱփրիկէ աշխարհն, ուր կարմիր քարիթն ելանէ յիւրմէն, լեսն երեք գարէհատ՝ և տան արծուացն՝ օգտէ. և զդեղին ջուրն սրբէ և .աղջ առնէ:

« Երկաթախտ քարն՝ լեսն և մորհամ՝ շինել լուրջ, ցամաքեցնէ զնասուրն, և ողջացնէ. և ում աղիքն թուլցնել լինի՝ լեսն և տուր պնդէ:

« Պյոր լրջագոյն, ով պահէ ընդ ինքն՝ ակուսյին ցաւն կտրի:

« Պյոր սպիտակ, որ զերդ ապակի հալի. ով պահէ ընդ ինքն՝ գէշ երազ չտեսնու:

« Պեւեղն կարմիր ֆնճանի տակ է. ով պահէ ընդ ինքն՝ կրսի՝ ցաւուն օգտէ, և այսահարութեան և վախելոյ:

« Խանտուանդն երեք ազգ են. ա. զերկաթն քարշէ յինքն և ք. փախչի յիւր-

կաթէն. և գ. սպիտակ է զերդ պլուր: Ի ծովն լինի. և երբ եփեն՝ կակղանա(յ) զերդ միս. օգտէ թիւնաւորաց վիրի. և Գրիստոսը Աստուծոյ փառք յաւիտեանս ամէն »:



ԱՐՇԱԽԻՐ ՆՕՇԱՊԷՐԵԱՆ

Գ.

(Շար. տես թզմ. 1921. էջ 201)

Փերթուածներու բաժնին մէջ, քանի մը կտոր ամփոփուած են « Մանկական երազներ, դպրոցական շրջանի երիտաւարը թոխչներ » տիտղոսին տակ: Չենք հասկնար թէ ինչո՞ւ այս տիտղոսը քերթուածներու սկիզբը չեն դրած և միայն քանի մը հատէ յառաջ դրած են, մանաւանդ որ տակը կը նշանակեն նաև 914-915 թուականը: Բայց փերթուածներու մէջ կայ որ, ինչպէս Պայծառ Գիւրեհեր, գրուած է 1910ին, ուրիշ մը՝ Չօն առ վշտահար Հայր Գասպար էֆ. Նեմցէ, 1918ին, ուստի և լաւ չհասկցուի՝ թէ ինչո՞ւ գրուածքին ճակատին մէջ կը համարուի թէ փերթուածներն ու Արժակ բանաստեղծութիւնները գրուած են 1914-1915 տարիներուն:

Փերթուածներուն մէջ եթէ Արշախիր ուրիշ դժուարութեան մը կը բախի՝ իր զգացումները բացատրելու թուական և յանգաւոր տաղաչափութիւնն է: Արդէն դժուար բան մըն է որ մարդս կարենայ արձակ իր միտքը վայելուչ բացատրել. բայց աւելի դժուար կ'ըլլայ՝ երբ ուզենք անոր կապեր ալ աւելցնել, ինչպէս են ոտանաւորին ոտքերն ու յանգերը: Արշախիր արդէն օրինակելի արձակագիր մը չէր, յաճախ կը անդանչէ լեզուի պարզութեան ու յստակութեան դէմ: Եւ իր աշակերտութեան տարիները և այն մթնոլորտը, ուր ապրած է, այն տարիներուն լեզուի զեղեցկութեան տիպար օրինակներ

1. Սպիտակ = Մեհիւ:

2. Բւիթն = Նասը:

3. Արժակ (?).